

Դ-42

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՂԱՎՆԻ ԱԼԵՔՍԱՆԴՐԻ

ԱՄՆ-Ի ՎԱՐԱԾ ԶԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԼԻՔԱՆԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ
ԶԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՍԻ ԵՎ ՃԳՆԱԺԱՍԻ ԸՆԹԱՅՔՈՒՄ
(1975-1991թթ.)

Է.00.02- «Համաշխարհային պատմություն»
մասնագիտությամբ
պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման
ատենախոսության

ՍԵՂՍԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ-2007

Ատենախոսության բեման հաստատվել է Երևանի պետական համալսարանի Արևելագիտության ֆակուլտետի գիտական խորհրդում

Գիտական ղեկավար՝ պատմական գիտությունների թեկնածու՝
Ռ.Կ.Կարապետյան


Պաշտոնական ընդդիմախոսներ՝ պատմական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր՝ Վ.Ա.Բայրուրյան
պատմական գիտությունների թեկնածու՝
Շ.Լ.Կարամանուկյան

Առաջատար կազմակերպություն՝ Երևանի Խ.Արուսյանի անվան
Հայկական պետական մանկավարժական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2007թ. դեկտեմբերի 21-ին, ժ. 14⁰⁰-ին, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտում գործող ԲՈՀ-ի 006 մասնագիտական խորհրդի նիստում (Հասցեն՝ 375019, Երևան, Սարջալ Բաղրամյան պող., 24 գ., 11-րդ հարկ, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի նիստերի դահլիճ):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2007թ. նոյեմբերի 20-ին:

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար
պատմական գիտությունների դոկտոր՝  Վ.Ա.Զորանյան

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

1. ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1975-1990թթ. Լիբանանի քաղաքացիական պատերազմի, սոցիալ-տնտեսական և քաղաքական ճգնաժամի նկատմամբ ԱՄՆ-ի դիրքորոշումն ու վարած քաղաքականությունն ունի ոչ միայն կարևոր գիտական, այլ քաղաքական և գործնական նշանակություն:

Ուսումնասիրվող ժամանակահատվածում ներլիբանանյան և տարածաշրջանային զարգացումներում ԱՄՆ-ի մասնակցությունն ու նրա ազդեցության ուսումնասիրությունն արդիական է ոչ միայն Լիբանանի այդ շրջանի պատմությունը, դրան հաջորդած տարիների զարգացումներն ու երկրի ներկա իրավիճակը ճիշտ հասկանալու, այլև տարածաշրջանային գործընթացներն ավելի համապարփակ ու խորը գնահատելու առումով:

Թեմայի ուսումնասիրությունը նպաստում է նաև մերձավորարևելյան հակամարտության և վերջինիս ուղղությամբ ԱՄՆ-ի դերակատարության առավել ընդգրկուն պատկերացմանն ու այդ հակամարտության սրման արդյունքում տարածաշրջանում և Լիբանանում խորացող հակասությունների ճիշտ ըմբռնմանը:

Սույն թեմայի արդիականության հարցն ուղղակիորեն պայմանավորված է նաև մերձավորարևելյան տարածաշրջանում Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքական կարևոր գործընկերներից մեկի՝ Լիբանանի Հանրապետության նորագույն պատմության, ներքին և արտաքին քաղաքականության հանգույցային հիմնախնդիրների ուսումնասիրման կարևորությամբ:

2. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ատենախոսության բեման ընտրվել է՝ ելնելով Լիբանանի ճգնաժամի և 1975-1991թթ. ԱՄՆ-ի վարած մերձավորարևելյան և այդ համատեքստում լիբանանյան քաղաքականության, նրա առանձնահատկությունների հետազոտման և դրանց ամբողջական պատկերացման կարևորությունից, որը քաղաքացիական համար հեղինակն իր առջև դրել է հետևյալ խնդիրները.

- Ներկայացնել Լիբանանի կրոնադավանական համակարգը, կրոնական համայնքները, դրանք ներկայացնող քաղաքական ուժերն ու կուսակցությունները, Լիբանանում ՊԱԿ-ի և նրա զինված խմբավորումների քաղաքական գործոն դառնալու հետևանքները լիբանանյան գաղապացումներում:
- Ցույց տալ Լիբանանի սոցիալ-տնտեսական, քաղաքական, ազգային-կրոնական, ինչպես նաև միջարաբական հակասություններով և արտաքին ուժերի ներգործությամբ պայմանավորված ճգնաժամի արդյունքում լիբանանյան հասարակության երկփեղկման ու ներքաղաքական ճգնաժամի սրման գործընթացները, ինչպես նաև դրանց վրա մի-

չազգային՝ մասնավորապես ԱՄՆ-ի և տարածաշրջանի երկրների՝ հատկապես Միքիայի վարած քաղաքականության հետևանքները:

- Գոյություն ունեցող սկզբնաղբյուրների և այլ նյութերի հիման վրա հետազոտել սառը պատերազմի ուսումնասիրվող ժամանակահատվածում համաշխարհային երկու բևեռների՝ Արևմուտքի և Արևելքի միջև Մերձավոր Արևելքի (այսուհետ՝ ՄԱ), մասնավորապես Լիբանանի գրադեցրած տեղը, ինչպես նաև արաբ-իսրայելական հակամարտության և ուղղակի կամ անուղղակի կերպով ներպետական և միջպետական հակամարտությունների վարման նպատակով պահուստային մարտադաշտի վերածված Լիբանանի նկատմամբ գերտերությունների և տարածաշրջանի երկրների գրադեցրած դիրքորոշումը:
- Քննության ենթարկել ուսումնասիրվող ժամանակահատվածում ԱՄՆ-ի չորս վարչակազմերի՝ Ջերալդ Ֆորդի (1974-1977թթ.), Ջիմմի Կարտերի (1977-1981թթ.), Ռոնալդ Ռեյգանի (1981-1989թթ.) և Ջորջ Բուշի (1989-1993թթ.) մերձավորարևելյան քաղաքականության և դրա համատեքստում լիբանանյան քաղաքականության ուղղությամբ կրած փոփոխությունները, բացահայտել դրանց պատճառահետևանքային կապն ու արդեցությունը տարածաշրջանային և լիբանանյան զարգացումների վրա:
- Հետազոտել մերձավորարևելյան հակամարտության խաղաղ կարգավորման գործընթացում ԱՄՆ-ի միանձնյա տնօրինման և ՄԱ-ի օրակարգում Լիբանանին լուսանցքային դեր հատկացնելու արդյունքում Լիբանանի քաղաքական ճգնաժամի խորացման, այն գերտերությունների մերձավորարևելյան հովանավորյալների և ներհամայնքային պայքարի օջախի վերածման հետևանքները:
- Բացահայտել ՄԱ-ում ԱՄՆ-ի վարած իսրայելամետ քաղաքականության արդյունքում Վաշինգտոնի ռազմաքաղաքական աջակցությունից օգտվող Թեյ-Ավիվի կողմից լիբանանյան երկու (1978 և 1982թթ.) ագրեսիաների և Լիբանանից ՊԱԿ-ի ռազմաքաղաքական կառույցների դուրս բերման ուղղությամբ ԱՄՆ-ի միջնորդական ջանքերի ու երկրում արևմտամետ ու իսրայելամետ կառավարության հաստատման գործընթացները:
- Յույց տալ 1982թ. երկրորդ կեսից Լիբանանի ներքաղաքական կարգավորման գործընթացում ԱՄՆ-ի գրադեցրած միակողմանի դիրքորոշման արդյունքում կրած քաղաքական ձախողումը, ԽՍՀՄ-ի տեղական դաշնակցի՝ Միքիայի կողմից ԱՄՆ-ի հովանավորած արաբ-իսրայելական համաձայնագրի ձախողումը, Լիբանանի արմատական շարժումների և հակահարձակի պայքարում ԱՄՆ-ի անգործությունն ու այդ ուղղությամբ Վաշինգտոնի վարած երկակի ստանդարտների քաղաքականությունը:
- Յույց տալ ԱՄՆ-ի՝ իսրայելալիբանանյան համագործակցության հովանավորից սիրիալիբանանյան համագործակցության հովանավորի փոխակերպման գործընթացը:

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ

Ատենախոսության բեման՝ «ԱՄՆ-Ի ՎԱՐԱԾ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԼԻԲԱՆԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ՔԱՂԱՔԱՅԻՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՍԻ ԵՎ ՃԳՆԱԺԱՍԻ ԸՆԹԱՅՔՈՒՄ (1975-1991թթ.)», մեզանում դեռևս չի դարձել հատուկ ուսումնասիրության առարկա: Թեև ԱՄՆ-ի մերձավորարևելյան քաղաքականությունն ուսումնասիրվել է օտարազգի բազմաթիվ հեղինակների կողմից, այնուհանդերձ, ուսումնասիրվող ժամանակաշրջանում ԱՄՆ-ի լիբանանյան քաղաքականության, ինչպես նաև լիբանանյան ներքաղաքական զարգացումների և դրանցում տարածաշրջանային երկրների ներգրավվածության ու մասնակցության որոշ ասպեկտների ամբողջական ուսումնասիրությունը դեռևս չի ներկայացվել առանձին աշխատանքով:

Ներկա աշխատությունն իր բովանդակությամբ և հարցադրումներով հայրենական արևելագիտության մեջ, որքանով մեզ հայտնի է, առաջին ուսումնասիրությունն է, որտեղ համակողմանի վերլուծության են ենթարկվում միմյանց փոխարինած ԱՄՆ-ի չորս վարչակազմերի (Ջերալդ Ֆորդի, Ջիմմի Կարտերի, Ռոնալդ Ռեյգանի, Ջորջ Բուշի) վարած մերձավորարևելյան և լիբանանյան քաղաքականության զարգացման փուլերը, ընթացքն ու օրինաչափությունները:

Ատենախոսության գիտական նորույքը կապված է նաև ատենախոսության էջերում 1975-1990թթ. ԱՄՆ-ի վարած մերձավորարևելյան և այդ համատեքստում լիբանանյան քաղաքականության էության, նպատակների և հետևանքների բացահայտման, նրա իրականացման մեթոդների և ուղիների վերլուծության հետ՝ լայնորեն օգտագործելով տարաբնույթ պաշտոնական փաստաթղթեր, նյութեր և գրականություն՝ հայերեն, արաբերեն, անգլերեն, ռուսերեն լեզուներով:

4. ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ

Ժամանակագրական առումով ատենախոսությունն ընդգրկում է 1975-1991թթ. ժամանակահատվածը՝ 1975թ. Լիբանանում բռնկված երկրորդ քաղաքացիական պատերազմից մինչև 1991թ. սիրիալիբանանյան Եղբայրության, համագործակցության և համակարգման դաշնագրի կնքումը:

5. ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՍԵԹՈՂԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԸ

Ատենախոսության մեթոդաբանական հիմքում ընկած են 1975-1991թթ. Լիբանանի քաղաքացիական պատերազմի և ճգնաժամի ընթացքում երկրի ներքին գործերին արտաքին միջամտությունների ու ագրեսիաների, հակամարտությանը մասնակից արտաքին ու ներքին ուժերի միջև գերտերությունների, մասնավորապես ԱՄՆ-ի միջնորդական առաքելության և ուղղակի

մասնակցության, տարածաշրջանային զարգացումների հետ կապված հարցադրումների և տեսակետների քննական մեկնության, համեմատական և վերլուծական սկզբունքները: Իր արժանի տեղն է գտել նաև պատմահամեմատական, պատմավերլուծական և միջոցիսցիպլինար հետազոտության մեթոդի կիրառումը, որն ապահովում է քննարկվող առանցքային հիմնախնդիրների ամբողջական և խորքային ուսումնասիրությունը, դեպքերի և իրադարձությունների տրամաբանական շղթայական կապը:

6. ԱՇԽԱՏԱՌԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Սույն ատենախոսության մեջ առաջ քաշվող դրույթները, արված մեկնարկությունները և եզրահանգումները կարող են օգտագործվել Լիբանանում և առհասարակ Մերձավոր Արևելքի երկրներում քաղաքական գործընթացների և դրանց վրա ԱՄՆ-ի ազդեցության, տվյալ ժամանակաշրջանի քաղաքականության պատմության հիմնախնդիրներին նվիրված ուսումնասիրություններում և դասախոսություններում: Աշխատության դրույթները կարող են օգտակար լինել քաղաքագիտական հետազոտություններում և պետական մարմինների համար վերլուծական նյութեր պատրաստելու գործում, ինչպես նաև ծառայել Լիբանանի ու մերձավորարևելյան տարածաշրջանի այլ երկրների և քաղաքական գործընթացների նկատմամբ Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքական մտեցումների ճշգրտմանը:

7. ԱՇԽԱՏԱՌԹՅԱՆ ՓՈՐՉԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսությունը քննարկվել է ԵՊՀ-ի Արևելագիտության ֆակուլտետի արաբագիտության ամբիոնում, նրա հիմնական դրույթներն ու եզրակացությունները լուսաբանվել են հեղինակի կողմից հրատարակված գիտական հոդվածներում և թեզերում, Երիտասարդ արևելագետների հանրապետական XXIV, XXV, XXVIII գիտաժողովներում ընթերցված զեկուցումներում:

Հեղինակի հրատարակած հիմնադրույթների ու հոդվածների ցանկը ներկայացված է սեղմագրի վերջում:

8. ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Աշխատությունը գրվել է հայերեն, արաբերեն, անգլերեն, ռուսերեն և ֆրանսերեն լեզուներով տարարնույթ աղբյուրների և ուսումնասիրությունների հիման վրա: Ուսումնասիրությանը զգալիորեն նպաստել են հայ և օտարազգի հետազոտողների՝ քննարկվող թեմային նվիրված արժեքավոր աշխատությունները, հոդվածները, ինչպես նաև պաշտոնական հրատարակությունները, քաղաքական գործիչների հուշերը, հայտարարություններն ու պարբերականները:

Ուսումնասիրության համար որպես սկզբնաղբյուր ծառայել են Միավորված Ազգերի կազմակերպության նյութերը՝ ՄԱԿ-ի տարեգրքեր, Միջին և Մերձավոր Արևելքի քաղաքական զարգացմանը նվիրված բյուլետեններ և ամսագրեր¹, պաղեստինյան և լիբանանյան հիմնախնդիրն վերաբերող ՄԱԿ-ի պաշտոնական հրատարակումներ և Միջազգային փաստաթղթեր², ԽՍՀՄ-ի կառավարության արաբական երկրներին առնչվող փաստաթղթերի և նյութերի ժողովածուն³:

Մյուս կարևոր աղբյուրը լիբանանյան և արաբական զանազան պարբերականներն են, որոնցից հարկ է նշել արաբալեզու «Ալ-Ախբարը», «Ալ-Ահրամը», «Ալ-Միսրամ ալ-Իքթիսադիին», «Ալ-Ամալը», «Ալ-Բասսը», «Ալ-Դուրուքը», «Ալ-Իրաքը», «Ալ-Հուրրիյան», «Ալ-Մուսավվարը», «Ալ-Նահարը», «Ալ-Նիդան», «Ալ-Ռայ ալ-Ամմը», «Ալ-Սաուրան», «Ալ-Մուշահիդը», «Ալ-շարկը», «Ալ-Սաֆիրը», «Ֆալխստին ալ-Սաուրան», ֆրանսալեզու «Le Monde»-ը, «Le Mond Diplomatique»-ը, «Nouvel Observatoire»-ը, «L'Umanite»-ն, «Le Figaro»-ն, անգլալեզու «Baltimore Sun»-ը, «Boston Glob»-ը, «Christian Science Monitor»-ը, «Economist»-ը, «Philadelphia Inquirer»-ը, «Financial Times»-ը, «Foreign Affaires»-ը, «Fortune»-ը, «Gardian»-ը, «Globe Affaires»-ը, «International Herald Tribune»-ը, «Middle East»-ը, «Middle East Report»-ը, «Middle East International»-ը, «Monday Morning»-ը, «New York Post»-ը, «New York Times»-ը, «Peopel's Daily World»-ը, «Sunday Times»-ը, «The

¹ Middle East Intelligence Bulletin, 2002; Middle East Contemporary Survey, 1979, 1983, 1987; Washington Institute for Near East Policy, 1990; Mediterrenian Quarterly, A Journal of Global Issues, 1990; Middle Eastern Studies, 1975; Middle East Journal, 1984; Middle East Reviw of International Affaires, Journal, 1997, 2000; Washington Report on Middle East Affaires, 1991; The New York Review of Books, 2004.

² Institute for Palestine Studies, Beirut, 1979; Basic Facts About The United Nations, New York, 2000, Journal of Palestine Studies 1976; International Documents on Palestine, Beirut, 1970, 1971; Basic Facts About The United Nations, N.Y., 2000; Middle East Historic Documents, The Taif Agreement, Sept. 1989, Ինտ. կայքը՝ [http:// www. lebanonwire. com prominent/historicdocuments/1989taefagreem nt. asp](http://www.lebanonwire.com/prominent/historicdocuments/1989taefagreem nt. asp); Jewish Virtual Library, A Division of The American-Israeli Cooperative Enterprise, Peace Agreement Between Israel and Lebanon (May 17, 1983), Ինտերն. կայքը՝ <http://www.jewishvirtuallibrary.org/jsource/history/isaellebanon83.html>; UN Resolutions, <http://www.un.org/russian/documen/scresol/1978/res425.pdf>.

³ Советский союз и Палестинская проблема, СССР в борьбе за справедливое ближневосточное урегулирование, Американский Экспансионизм Новейшее время, АН СССР, Институт Всеобщей Истории, М., 1986г.; Арабо-израильский конфликт и палестинская проблема, ВГБИЛ, Москва, 1989; Внешняя политика Советского Союза: Сб. Документов, 1977 год, М., 1987; Внешняя политика Советского Союза и международные отношения, М., 1982.

Times», «Time»-ը, «Washington Post»-ը և այլն, ուր տեղ են գտել ԱՄՆ-ի մերձավորարևելյան և լիբանանյան քաղաքականության մասին հարուստ տեղեկություններ և վերլուծություններ, ինչպես նաև Լիբանանի և ԱՄՆ-ի նախագահների, կառավարությունների և պետական բարձրաստիճան պաշտոնյաների հայտարարություններն ու լիբանանյան տարրեր համաձայնագրեր՝ համապատասխան մեկնաբանություններով:

Ատենախոսության մեջ բարձրացվող տարրեր հարցերի լուսարանմանը մեծապես նպաստել են Ն. Հովհաննիսյանի՝ Մերձավոր և Միջին Արևելքի, հատկապես, Լիբանանի պատմության տարրեր ժամանակաշրջաններին վերաբերող արժեքավոր աշխատություններն ու հոդվածները⁴:

Հարկ է նշել, որ հայ արևելագիտությունը լավագույնս ուսումնասիրել է Մերձավոր Արևելքի, մասնավորապես արաբական երկրների պատմությունն ու արտաքին հարաբերություններին առնչվող հարցերը, ինչի օրինակ կարող են ծառայել Վ.Բալբուրդյանի, Հ.Գրիգորյանի, Շ.Կարամանուկյանի, Ռ.Կարապետյանի, Լ.Հարությունյանի, Ա.Հովհաննիսյանի⁵ և այլոց մեկնաբանություններն ու հոդվածները:

⁴ Ն. Հովհաննիսյան, Լիբանանյան ճգնաժամը և Լիբանանի հայ համայնքի դիրքորոշումը, Եր., 1982; Ն. Հովհաննիսյան, Ազգային-ազատագրական պայքարը Լիբանանում 1939-1958թթ, Եր., 1967; Հովհաննիսյան Ն., Իրան, Այաթոլլահ Խոմենիի դարաշրջանը, ՀՀ ԳԱԱ ԱԻ, Եր., 2004; Հովհաննիսյան Ն.Հ., Արաբական երկրների պատմություն, Արաբները 7-րդ դարից մինչև 1516թ., 1-ին հատոր, ՀՀ ԳԱԱ ԱԻ, Եր., 2003; Հովհաննիսյան Ն.Հ., Արաբական երկրների պատմություն, Օսմանյան տիրապետության շրջան (1516-1918թթ.), 2-րդ հատոր, Եր., ՀՀ ԳԱԱ ԱԻ, 2004; Հովհաննիսյան Ն.Հ., Արաբական երկրների պատմություն, Անկախության և ինքնիշխանության դարաշրջան (1918-2005թթ.), 3-րդ հատոր, Եր., ՀՀ ԳԱԱ ԱԻ, 2006; Հովհաննիսյան Ն.Հ., Արաբական երկրների պատմություն, Անկախության և ինքնիշխանության դարաշրջան (1918-2005թթ.), 4-րդ հատոր, ՀՀ ԳԱԱ ԱԻ, Երևան, 2007; Օգանեսյան Ն., Արաբական Վոստոկ և Մագրիբ, Восстание в Ливане в ноябре 1943г. и его историческое значение, АН СССР, ИВ, Сборник Статей, М., 1977.

⁵ Караманукян Ш.Л., Место Арабской Лиги в межарабских отношениях, Вопросы Международных и региональных отношений, Проблемы современной советской арабистики. Труды IV Всесоюзной конференции арабистов. Ереван, 1985, АН Арм. ССР, Ер., 1989; Ռ.Վարապետյան, Միրիա-ամերիկյան հարաբերությունները 1967-1996, Եր., 2000; Ա. Հովհաննիսյան, ԱՄՆ-ի քաղաքականությունը իսրայելա-պաղեստինյան հակամարտության հանդեպ, Եր., 2001; Григорян Г.М., Позиция Сирии в Ближневосточном конфликте, Вопросы Международных и региональных отношений, Проблемы современной советской арабистики. Труды IV Всесоюзной конференции арабистов, Ер., 1985, Вып. I., Современные

Հայցողի առջև կանգնած խնդիրների լուծմանը նպաստել են, մասնավորապես, խորհրդային հետազոտողների արժեքավոր աշխատությունները, Մերձավոր և Միջին Արևելքի, ԱՄՆ-ի պատմության հարցերի վերաբերյալ տպագրված մենագրությունները, ժողովածուները և պարբերականները⁶:

Խորհրդային շրջանի հեղինակների շարքում հարկ է հիշատակել Վ.Վոլոսովի, Ե.Գմիտրիևի (նույն ինքը՝ Ե.Պիրլին), Ս.Իվանովի, Գ.Միրսկիի, Ա.Ազարիչևի, Ե.Պրիմակովի, Ա.Պավլովի, և այլոց ուսումնասիրություններն ու մենագրությունները, որոնք առնչվում են Մերձավոր Արևելքի ժողովուրդների և երկրների փոխհարաբերություններին, արաբ-իսրայելական հակամարտության առանձին խնդիրներին և Լիբանանում տարրեր ժամանակաշրջաններում տեղի ունեցած զարգացումներին⁷:

Արաբ-իսրայելական հակամարտության հետազոտմանը, Լիբանանի պատմությանն առնչվող տարրեր խնդիրներին նվիրված արևմտյան ուսումնասիրողների աշխատությունների շարքում անհրաժեշտ է նշել ինչպես տարրեր հետազոտական կենտրոններ, այնպես էլ Ջ.Բուլդոչի, Մ. Մաոզի և Ա.Յամիլի, Ռ.Ֆիսկի, Ռ. Օ Ֆրիդմանի, Ի.Ռաբինովիչի և Հ.Շեքերի, Ռ.Ռեյզյանի,

политические и социально-экономические проблемы арабских стран. АН Армянской ССР, Ер., 1989.

⁶ Новейшая история арабских стран Азии, М., 1988; ТАСС, Атлас; ТАСС, БПИ; Арабский мир. Три десятилетия независимого развития, М., 1990; Сивачев Н.В., Языков Е.Ф., Новейшая История США, М., 1980, Современные Соединенные Штаты Америки. Энциклопедический справочник, М., 1988; Примаков Е., Годы в большой политике, М., 1999; Иванян Э.А., Белый дом: президенты и политика. М., 1979; Овинников Р., Зигзаги внешней политики США, от Никсона до Рейгана, М., 1986; Петрусенко В.В., Белый Дом и ЦРУ, М., 1985; Моджорян Л.А., Международный сионизм на службе империалистической реакции, М., 1984.

⁷ Вольнов, Ливанский дневник, М., 1980; Е. Дмитриев, Палестинская трагедия, М., 1986; его же Палестинский уэльс, М., 1978; Дмитриев Е., Ладский В., Путь к миру на Ближнем Востоке, М., 1974; Агарьшев А., От Кэмп-Дэвида к трагедии Ливана, М., 1983; Его же Ближний Восток: Терроризм и его покровители, М., 1986; Примаков Е.М., Анатомия Ближневосточного конфликта, М., 1978; Ե. Պրիմակով, Մի դավադրության պատմություն, Եր., 1987; Киселев В., Палестинская проблема в международных отношениях: региональный аспект, М., 1988; Мирский Г., Ливан в 80-ые годы, М., 1987; Эпштейн А.Д., Бесконечное противостояние, М., 2000; Павлов А., Ястребы над Ливаном, М., 1990; Шуйская Н., Ливан, Странники и противники гражданского примирения (осень 1985-1986г.), Восток и Современность, Научно-информационный бюллетень, N 1(43), ЭКЗ. N 000252, АН СССР, ИВ, М., 1978; Позиции Американского империализма в Ливане, Арабский Восток, Специальный бюллетень N 12, Экз. N 28, АН СССР, ИВ, М., 1960.

Վ.Քվանդտի, Պ.Կավվակորեսսի, Վ.Պոլկի, Վ.Քլիվլենդի, Հ.Քիսինգերի, Կ.Վայնբերգերի, Ա.Հեյզի, Թ.Փերրանի, և այլոց մենագրությունները, հողվածներն ու հրատարակումները⁸։

Առանձնահատուկ արժեք են ներկայացնում արաբ պատմաբանների Լիբանանի քաղաքացիական երկրորդ պատերազմին և ճգնաժամին, ինչպես նաև ԱՄՆ-Լիբանան հարաբերություններին նվիրված հետազոտությունները։ Հարկ է նշել Մարիուս Դիբի, Բարի Ռարինի, Պ.Սալեմի, Ղասան Թուկյուն և այլոց աշխատությունները⁹։

9. ԱՇԵԱՏԱՆՔԻ ԿԱՌՈՒՅՎԱԾՔՆ ՈՒ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, չորս գլուխներից, որոնցից յուրաքանչյուրը համապատասխանաբար կազմված է ենթավերնագրերից, վերջաբանից, օգտագործված աղբյուրների և գրականության ցանկից, օգտագործված հապավումների ցանկից, քարտեզից և աղյուսակից, 8 հավելվածներից։

ՆԵՐԱԾՈՒԹՅԱՆ մեջ խոսվում է ատենախոսության բեմայի արդիականության, նպատակների ու խնդիրների մասին, հիմնավորվում է աշխատանքի կիրառական նշանակությունը, տրվում է օգտագործված աղբյուրների և գրականության համառոտ տեսությունը, աշխատանքի մեթոդաբանական հիմքը և գիտական նորույթը։

Առաջին գլուխը՝ «ԼԻԲԱՆԱՆԻ 1975Թ. ԲԱՂԱՋԱՅԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ ԱՄՆ-Ի ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ՆՐԱ ՍԿՋԲՆԱԿԱՆ ՓՈՒԼՈՒՍ».

⁸ I. Rabinovich, The War for Lebanon 1970-1983, Correll University Press, 1984; H. Kissinger, White House Years, Boston-Toronto, 1979; H. Kissinger, Years of Upheaval, Boston-Toronto, 1982; Tabitha Petran, The Struggle over Lebanon, N.Y., 1987; Michael C. Hudson, The Precarious Republic: Political Modernization in Lebanon, N.Y., 1985; Fred J. Khouri, The Arab Israeli Dilemma, The Reagan Administration, Israel, the Arabs, and Palestinians, January 1981-March 1985, N.Y., 1985; Polk William, The Arab World Today, Harvard University Press, 1991; Peretz Don, The Middle East Today, The Republic of Lebanon, Fifth Edition, Praeger, N.Y., 1988; Пигер Кальвокоресси, Мировая политика после 1945 года, Книга 1, М., 2000.

⁹ Al-Naqqash, Zaki, Lubnan Bayna al-Haqiqah wa-al-Zilal, (Lebanon Between the Truth and Shadows). Beirut, 1966; Nasrallah Fida, The Treaty of Brotherhood, Co-operation & Co-ordination, University of Exeter Press, 1994; Mahmoud Riad, The Struggle for Peace In the Middle East, N. Y., 1981; Kamal Salibi, Crossroads to Civil War, Lebanon 1958-1976, N. Y., 1976; Aruri Naseer H., Middle East Crucible; Studies On the Arab-Israeli War of October 1973, The Medina University Press International, USA, 1975.

բաղկացած է 9 ենթավերնագրերից։ Այն նվիրված է 2-րդ աշխարհամարտից ի վեր մինչև 1970-ականների առաջին կեսն ԱՄՆ-ի մերձավորարևելյան քաղաքականության ընդհանուր բնութագրի, Լիբանանի Հանրապետության կրոնադավանական կազմի և քաղաքական համակարգի, Լիբանանի սոցիալ-տնտեսական ու քաղաքական ճգնաժամի առաջացման և դրա խորացման գործում պաղեստինյան գործոնի ազդեցության, քաղաքացիական պատերազմի բռնկման, հակամարտող դաշինքների ձևավորման ուսումնասիրությանը։

Ըննության է ենթարկվում ԱՄՆ-ի նախագահ Ջերալդ Ֆորդի (1974-1977թթ.) վարչակազմի մերձավորարևելյան քաղաքականությունը, որն իր առաջնահերթությունը համարեց տարածաշրջանի կայունության պահպանումը, ՄԱ-ում ԱՄՆ-ի կայուն գոյատևմանը սպառնացող սուր ճգնաժամերի կանխարգելումը, ԽՍՀՄ-ի ազդեցության կասեցումը։ 1973թ. հոկտեմբերյան պատերազմի արդյունքները, Իսրայելի հետ սեպարատ պայմանագրի կնքման ուղղությամբ Եգիպտոսի որգերգրած ուղեգիծը, արաբական երկրների միջև այդ շրջանին բնորոշ ամենատարբեր բնույթի հակասություններն ու 1975 թվից բռնկված լիբանանյան ճգնաժամն առավել բարդացրին ՄԱ-ի իրադրությունը՝ ստեղծելով որակապես նոր իրադրություն։ ՄԱ-ի օրակարգում ընդգծելով «առավել կարևոր»՝ իսրայելաեգիպտական սեպարատ գործարքի կնքումը և՛ ելնելով Լիբանանում արմատական վերափոխումներ իրականացնելու անհնարինության կանխադրույթից, Վաշինգտոնը հետամուտ եղավ երկրում առկա status quo-ի պահպանման քաղաքականությանը։ Լիբանանի հարցում ամերիկյան վարչակազմը սկսեց անհանգստություն ցուցաբերել միայն 1975թ. քաղաքացիական պատերազմի սկզբում՝ հակամարտությանը Սիրիայի և Իսրայելի ռազմական միջամտության նախանշաններ ի հայտ գալուց հետո։ Խուսափելով ճգնաժամի առավել խորացման ղեկքում գերտերությունների՝ իրենց հովանավորյալների (Իսրայելը՝ ԱՄՆ-ի հովանավորյալ, Սիրիան և ՊԱԿ-ը՝ ԽՍՀՄ-ի) կողմից անխուսափելի ու միաժամանակ անցանկալի միջամտության հավանականությունից, ԱՄՆ-ը համաձայնվում է 1975թ. աշնանը Լիբանանի գործերին Սիրիայի դիվանագիտական միջամտությանը՝ ապահովելով Իսրայելի չեզոքությունն այդ ուղղությամբ։ Նշյալ քաղաքականության շրջանակներում սիրիական ներխուժմանը և վերջինիս կողմից ՊԱԿ-ի ջախջախմանը պետք է հետևեր տարածաշրջանում «Pax Americana»-ի հաստատումը, որի արդյունքում պետք է թուլացվեին ծայրահեղական վարչակարգ ունեցող արաբական երկրները և նվազագույնի հասցվեր ՄԱ-ում ԽՍՀՄ-ի ազդեցությունը։ Նախապատվությունը տալով չափավոր արաբական երկրների (որոնք լիբանանյան ճգնաժամը միջարաբական և ոչ թե միջազգային խնդիր էին համարում) միջոցով խնդրի կարգավորմանը, ԱՄՆ-ն խորհուրդ է տալիս Իսրայելին, ԽՍՀՄ-ին և Եվրոպական այլ տերություններին, գերծ մնալ Լիբանանում հնարավոր որևէ միջամտությունից։

Երկրորդ գլուխը՝ «ԱՄՆ-Ի ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ՍԻՐԻԱՅԻ՝ 1976Թ. ԵՎ ԻՍՐԱՅԵԼԻ՝ 1978Թ. ԼԻԲԱՆԱՆՅԱՆ ՆԵՐԽՈՒԺՄԱՆ ՆՎԱՏԱՄԲ», բաղկացած է 7 ենթավերնագրից։ Այն անդրադառնում է 1976թ. ամռանը Սիրիայի լիբանանյան ռազմական ներխուժման, Լիբանանին նվիրված ԱՊԼ-ի

(Արարական պետությունների լիգայի) վեհաժողովների, «սիրիա-հորդանան-լիբանանյան» դաշնային միության ծրագրի նկատմամբ ԱՄՆ-ի դիրքորոշման ուսումնասիրությանը: Քննության է ենթարկվում ԱՄՆ-ի նախագահ Ջիմմի Կարտերի (1977-1981թթ.) մերձավորարևելյան քաղաքականությունը, որն արաբ-իսրայելական հակամարտության համապարփակ կարգավորումը դարձրեց իր վերագույն առաջնահերթություններից մեկը, ամբողջովին համակվելով Իսրայելի անվտանգության, պաղեստինցիների իրավունքների, ԽՍՀՄ-ի նկատմամբ ռազմավարական դիրքերի բարելավման ու տարածաշրջանում վերջիններիս ազդեցության կասեցման, ինչպես նաև Արևմուտքի կախվածությունն արաբական նավթից սահմանափակման հիմնախնդիրներով: Բավարարվելով ՄԱ-ում հաստատված status quo իրավիճակով, նոր վարչակազմի նպատակը ՄԱ-ի ցանկացած հատվածում խաղաղությանը խաթարող կամ խոչընդոտող զարգացումների կանխարգելումն էր: Թեև Կարտերը վերանայեց նախորդ վարչակազմի ՄԱ-ի քաղաքականության որոշ ասպեկտներ, այնուհանդերձ, հավատարիմ մնաց լիբանանյան ճգնաժամի հանդեպ նրանց որդեգրած հիմնական ուղեգծին՝ տարածաշրջանային խնդիրների օրակարգում Լիբանանին երկրորդական տեղ հատկացնելով: Կարտերի վարչակազմը Սիրիայի լիբանանյան ռազմարշավը դիտում էր կամ ուղղակի, կամ էլ 1977թ. գարնանը նախատեսվող Ժնևի համաժողովի միջոցով սիրիա-իսրայելական հարաբերությունների բանակցային կարգավորման հնարավորություն, որի առաջընթացին այդժամ խոչընդոտում էր հարավային Լիբանանում ստեղծված բարդ իրավիճակը և որի «շտկման» գործը Վաշինգտոնը *վստահում էր* Սիրիային: Սակայն Դամասկոսի *խաղաղ մտադրությունները* լրջորեն անհանգստացնում էին Իսրայելին, ուստի Սպիտակ տունը ստիպված էր վերջիններիս համոզել խոհեմություն դրևորել՝ խուսափելու Ժնևի համաժողովի աշխատանքների վերականգնմանը խոչընդոտող քայլերից:

1977թ. գարնանն արաբ-իսրայելական կարգավորմանն ուղղված դիվանագիտական ջանքերի թուլացման արդյունքում Լիբանանի հարավի իրադրությունը (պաղեստինցիների ու իսրայելցիների միջև) սրվեց: Իսրայելը չիրագործեց ամերիկյան դիվանագիտական խողովակների միջոցով իսրայելական ներխուժման անհնարինության ուղղությամբ Լիբանանին տրված երաշխիքները: Սպիտակ տունն էլ Իսրայելին իրավունք վերապահեց Լիբանանի հարավի նկատմամբ արդյունավետ վերահսկողություն հաստատելու հարցում՝ հակառակ նախօրոք դրա անթույլատրելիության շուրջ արված պաշտոնական հայտարարություններին: Իրենց հերթին, լիբանանյան աջերը հակասիրիական կամպանիա ծավալեցին՝ ապավինելով ինչպես ԱՄՆ-ի և Իսրայելի ռազմաքաղաքական աջակցությանը, այնպես էլ լիբանանցիների զգալի շրջանում աճող հակասիրիական տրամադրություններին:

Փաստորեն, Կարտերի վարչակազմը՝ Ժնևի համաժողովի աշխատանքների վերականգնման ուղղությամբ գործնական հաջողության չհասնելով, ետին պլան մղեց Սիրիայի հետ բացված, իսկ պաղեստինցիների հետ ակնկալվող երկխոսությունը և սատար կանգնեց իսրայելաեգիպտական պայմանագրի կնքման գործընթացին: Գործարքը դիտվում էր իբրև Իսրայելի և

նրա բոլոր հակառակորդ-հարևանների միջև ստորագրվելիք մի շարք սեպտեմբերյան պայմանագրերի նախակարուպետ, որոնք հետագայում կարող էին ամերիկյան հովանու ներքո ռազմաքաղաքական դաշինքների վերածվել: Գործարքի իրականացման համատեքստում Վաշինգտոնը սկսեց սահմանափակել Լիբանանում սիրիական գործողությունները՝ հենվելով Լիբանանի անվտանգության երաշխավորման խնդրանքով Վաշինգտոնին լիբանանյան աջերի ուղղած կոչերի վրա և ակնկալելով մերձավորարևելյան կարգավորման գործընթացում Սիրիայի հետագա դիրքորոշման՝ ԱՄՆ-ին ցանկալի ձևով փոփոխությունը:

ԱՄՆ-ը սառն անտարբերությամբ արձագանքեց Իսրայելի 1978թ. մարտի լիբանանյան ագրեսիային՝ իրադրության կարգավորման հարցում այն անգամ օգտակար համարելով: Վաշինգտոնը պարզապես բննադատեց Իսրայելի կողմից «առանց լիազորությունների» ամերիկյան զենքի կիրառման փաստը և Լիբանանում «ԱՄՆ-ի խորհրդով» իսրայելական զորքերի պահպանման ուղղությամբ Թեյ-Ալլիի թույլ տված ակնարկները: Իրականում Սպիտակ տունը ոչ միայն տեղյակ էր նախատեսվող ներխուժման մասին, այլ ցանկության դեպքում, ի վիճակի էր հետաձգել կամ կանխել այն: Մնում է ենթադրել, որ ամերիկյան լուրջությունը հավասարազոր էր հավանության, ի հեճուկս Լիբանանի տարածքից իսրայելական զորքերի անհապաղ, անմիջական և առանց նախապայմանների դուրս բերման շուրջ ԱՄՆ-ի հովանու ներքո ՄԱԿ-ի ԱԽ-ի 1978թ. մարտի 19-ին ընդունած բանաձևին: Այսպիսով, Լիբանանի ճգնաժամն ամբողջովին ստվերվեց տարածաշրջանային մի շարք զարգացումներով, մասնավորապես եգիպտաիսրայելական բանակցային գործընթացով, որը եզրափակվեց 1979թ. մարտի 22-ին ԱՄՆ-ի հովանու ներքո կնքված եգիպտաիսրայելական համաձայնագրով:

Երրորդ գլուխը՝ «1982թ. ԻՍՐԱՅԵԼԻ ԼԻԲԱՆԱՆՅԱՆ ԱԳՐԵՍԻՎԱՆ ԵՎ ԼԻԲԱՆԱՆՅԱՆ ՉԱՐԳԱՅՈՒՄՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԱՄՆ-ԻՆ ՆԵՏՎԱԾ ԼՈՒՐՋ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐ», բաղկացած է 8 ենթավերնագրից: Այն նվիրված է Ռոնալդ Ռեյգանի կառավարության մերձավորարևելյան ու լիբանանյան քաղաքականությանը, որոնց շուրջ վարչակազմը դատում էր «սառը պատերազմի» ռազմալուծվելու Արևելք-Արևմուտք հակամարտության դիրքերից: Նոր վարչակազմին ևս ավելի շատ մտահոգում էր ոչ թե Լիբանանի «անցողիկ» համարվող ճգնաժամն ու արաբ-իսրայելական հակամարտությունը, այլ ՄԱ-ում ԽՍՀՄ-ի հնարավոր առաջխաղացման կասեցումն ու վերջինիս դաշնակից համարվող երկրների (Սիրիա և ՊԱԿ) միջոցով տարածաշրջանում համայնավարների ազդեցության սահմանափակումը, ԱՄՆ-ի համար ռազմավարական ու կենսական շահեր ներկայացնող Շոցի երկրների անվտանգության ապահովումը և վերջինիս նավթային պաշարների նկատմամբ Արևմուտքի ազատ մուտքի ապահովագրումը: Այն ձեռքբազատելու էր ամերիկյան արտաքին քաղաքականությունը ներտարածաշրջանային հակամարտությունների հետ կապված բարդություններից՝ միաժամանակ արևմտամետ կողմնորոշմամբ բոլոր պատվիրատու երկրներին համախմբելով հակախորհրդային առանցքի՝ տարածաշրջանային պաշտպանական նոր համակարգի՝ «ռազ-

մավարական կոնսենսուսի» շուրջ: Ռեյգանի վարչակազմի կարծիքով՝ հակախորհրդային ռազմավարության շուրջ Իսրայելին և արաբական վարչախմբերին համախմբող առանցք կամ միջոց կարող էր ծառայել եգիպտահարայելական գործարքը՝ ոչ թե ուղղակի գործող ավանդական դաշինքի, այլ *Վաշինգտոնի միջոցով* ԱՄՆ-ի և նրա տարածաշրջանային գործընկերների միջև հնարավոր «փոխհարաբերությունների» տեսքով:

1981թ. ԱՄՆ-ի և Իսրայելի միջև «Ռազմավարական փոխըմբռնման հուշագրի» ստորագրումից հետո արաբ-իսրայելական հակամարտությունում ստեղծված ճգնաժամային նոր իրավիճակը վարչակազմի ուշադրությունը հրավիրեց մասնավորապես լիբանանյան իրադարձությունների վրա՝ Ռեյգանի ութամյա նախագահության ընթացքում չկորցնելով իր հրատապությունը, և մնալով ԱՄՆ-ին նետված արտաքին լուրջ մարտահրավերներից մեկը: Վերոհիշյալ ռազմավարական հուշագրի ստորագրումից հետո, միմյանց դեմ սառը պատերազմի կարգավիճակում գտնվող երկու գերտերությունների ՄԱ-ի դաշնակիցների միջև հակասություններն էլ ավելի սրվեցին՝ իրենց գազաթնակետին հասնելով 1981թ. ապրիլին: Պաղեստինցիների դեմ Իսրայելի ռազմական աջակցությունից օգտվող լիբանանյան աջ-քրիստոնեական ուժերի գրոհների կասեցման գործում Սիրիայի միջամտությունն ի վերջո հանգեցրեց Իսրայելի և Սիրիայի միջև ռազմական բախման՝ ԱՄՆ-ԽՍՀՄ առճակատման հեռանկարով:

1982թ. ԱՄՆ-ի ՄԱ-ի քաղաքականությունը նշանավորվեց Ծոցի անվտանգության խնդիրներից լիբանանյան ճգնաժամի և արաբ-իսրայելական հակամարտության նկատմամբ դիվանագիտական ջանքերի ուղղորդմամբ, որի համապարփակ կարգավորմանը կասեցնող զարգացումները նպաստեցին 1982թ. հունիսի 6-ին Լիբանանի նկատմամբ իսրայելական ագրեսիայի՝ Արիել Շարոնի «Մեծ նախագծի» իրագործմանը: Վաշինգտոնը՝ համոզված լինելով ՊԱԿ-ի և Իսրայելի միջև 1981թ. հրադադարի դատապարտվածության հարցում, Թել-Ավիվի լիբանանյան ներխուժման միջոցով հնարավոր էր համարում միաժամանակ երկու հիմնախնդրի՝ Լիբանանի ճգնաժամի և արաբ-իսրայելական հակամարտության խաղաղ կարգավորումը: ԱՄՆ-ը գտնում էր, որ իսրայելական բանակի մուտքը Լիբանան կարող էր վերջ դնել Բեյրութում ՊԱԿ-ի ներկայությանը: Իսկ հետպատերազմյան Լիբանանից սիրիական, ՊԱԿ-ի և իսրայելական ուժերի դուրս բերման փաստը՝ նպաստելով ՄԱ-ի խաղաղության նոր գործընթացի մեկնարկին՝ կհեշտացներ ԱՄՆ-ին նպատակահարմար ձևով Լիբանանի հիմնախնդրի կարգավորման և ՊԱԿ-ի ինքնավարության շուրջ վարվող բանակցային գործընթացները: Վաշինգտոնը կիսում էր Լիբանանում իսրայելամետ ու արևմտամետ քրիստոնյա փառանգավորների ղեկավարությամբ «ուժեղ կենտրոնացված կառավարություն» հաստատելու ուղղությամբ Իսրայելի նկրտումները, որի հետ համագործակցության շրջանակներում պայմաններ կստեղծվեին երկրում ամերիկյան մշտական ռազմական ներկայության համար: Մինչդեռ ԽՍՀՄ-ի դաշնակից արաբական ուժերի պարտությունը կնսեմացներ վերջիններիս հեղինակությունը ՄԱ-ում և կիմաստագրկեր արաբական համատեքստում լիբանանյան հիմ-

նախնդրի կարգավորման գաղափարը, ԱՄՆ-ին կվերապահվեին միանձնյա հովանավորի ու միջնորդի դերը:

Այսպիսով, իսրայելական ուժերի կողմից Լիբանանի հարավի գրավման ու Բեյրութի պաշարման դեմ Վաշինգտոնի բանավոր բողոքարկումների քողի ներքո, ԱՄՆ-ը պատերազմի շարունակման նպատակով ռազմաքաղաքական և տնտեսական աջակցություն ցուցաբերեց Իսրայելին՝ միաժամանակ փորձելով կանխել Վաշինգտոնի արաբ դաշնակիցների բացասական հակադեցությունն ու խուսափել ԱՄՆ-ԽՍՀՄ առճակատման հնարավորությունից: Մինչ 1982թ. սեպտեմբերը, ՄԱԿ-ի խաղաղապահների՝ «Բազմազգ ուժերի» (ԲՈՒՄ՝ MNF) և ԱՄՆ-ի 800 ծովային հետևակայինների վերահսկողությամբ իրականացվեց ՊԱԿ-ի ռազմաքաղաքական կառույցների դուրսբերումը Լիբանանից: Սեպտեմբերի 1-ին Ռեյգանը հանդես եկավ մերձավորարևելյան խաղաղության «բարձ սկիզբ» նախաձեռնությամբ, որը հստակ քայլ էր արաբական աշխարհի դժգոհությունը մեղմելու և ամերիկյան քաղաքականությունն իսրայելականից տարոտրչելու ուղղությամբ: Ծրագիրն առաջադրում էր նաև արաբ-իսրայելական հակամարտության պատճառների արմատական կարգավորման, ՄԱ-ում խաղաղության և կայունության հասնելու նպատակով, ԱՄՆ-ի աջակցությամբ վերականգնել պատերազմից քայքայված Լիբանանը: Սակայն ԱՄՆ-ի 1600 ծովային հետևակայինները Բեյրութ վերադառնալու հրահանգ ստացան՝ 1982թ. սեպտեմբերին Լիբանանի նորընտիր նախագահ Բաշիր ժմայելի սպանությունից և Իսրայելի աջակցությամբ լիբանանյան աջ-քրիստոնեական ուժերի կողմից պաղեստինյան ճամբարների փախստականների նկատմամբ իրականացված դաժան կոտորածներից հետո:

Այսպիսով, ԱՄՆ-ը, որը նախկինում ՄԱ-ի օրակարգում Լիբանանին հատուկ քաղաքական ու ռազմավարական նշանակություն չէր տալիս, այդուհետ վերջինիս հանդեպ *հստակ* քաղաքականություն որդեգրեց: Վաշինգտոնը 1982թ. աշնանից ներքաշվեց լիբանանյան իրադարձությունների խրթին հորձանուտը և ստանձնեց Բաշիր ժմայելի սպանությունից մեկ շաբաթ անց, վերջինիս եղորը՝ Լիբանանի նախագահի պաշտոնում (սեպտեմբերի 21-ին) ընտրված Ամին ժմայելի արտաքին հիմնական հովանավորի դերակատարությունը: 1982թ. դեկտեմբերից Վաշինգտոնը ստանձնեց լիբանանյան բանակի զինավարժման ու հանդերձավորման պատասխանատվությունը՝ երկրում ապահովելով ամերիկյան ծովային հետևակայինների ու 6-րդ նավատորմի առկայությունը: ԱՄՆ-ը հույս ուներ արևմտամետ ժմայելի կառավարության ամրապնդման, հատկապես նրա բանակի վերակառուցման միջոցով նպաստել Լիբանանից սիրիական ու իսրայելական զորքերի միաժամանակյա դուրս բերմանը՝ հասնելով երկրում Սիրիայի ազդեցության սահմանափակմանը: 1983թ. մայիսի 17-ին ԱՄՆ-ի հովանու ներքո Իսրայելի և Լիբանանի միջև Լիբանանի տարածքի մեծ մասից Թել-Ավիվի հեռանալու շուրջ կնքված հաճախագրի գաղտնի մասով նախատեսվում էր նաև սիրիական զորքերի դուրս բերում:

Չորրորդ գլուխը՝ «ԱՄՆ-Ն ԻՍՐԱՅԵԼԱԼԻԲԱՆԱՆՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ (1983Թ.) ՀՈՎԱՆԱՎՈՐԻՑ ՍԻՐԻԱԼԻԲԱՆԱՆՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ (1989Թ.) ՀՈՎԱՆԱՎՈՐ», բաղկացած է 9 ենթավերնագրից: 1983թ. Վաշինգտոնը միաժամանակ կանգնած էր Լիբանանում ազգային հաշտության ապահովման, Լիբանանը Սիրիայի կապանքներից ազատելու, Լիբանանի հարավից իսրայելական ուժերի դուրս բերման, Ռեյգանի ծրագրի հիման վրա խաղաղության առավել լայն գործընթացի վերականգնման և, նախքան 1984թ. ԱՄՆ-ի նախագահական ընտրությունները, ամերիկյան ծովային հետևակայինների պահպանման առջև: Սակայն 1983թ. ապրիլին Ռեյգանի ծրագրի առաջին մասի վերջնական ձևադրմանը հետևեց նրա երկրորդ մասի՝ Լիբանանից օտարերկրյա ուժերի դուրս բերման գործընթացի ձևադրումը: Իսկ ԱՄՆ-ի պետքարտուղար Ջորջ Շուլցի ՄԱ կատարած հուլիսյան անհաջող այցելությունն ԱՄՆ-ի նախաձեռնությունը փակուղի մտցրեց՝ վնասելով վարչակազմի հեղինակությունն ինչպես ԱՄՆ-ում, այնպես էլ արտերկրում: Լիբանանից Վաշինգտոնի հեռացումը հեշտացնելու և Իսրայելի հետ Լիբանանի հակամարտությունը կանխելու նպատակով ԱՄՆ-ը վերականգնեց Թեյ-Ավիվի հետ ռազմավարական համագործակցությունը, որի արդյունքում Իսրայելը դարձավ ՄԱ-ում ամերիկյան այդժամ արդեն ուժային քաղաքականության և ռազմավարության կենտրոնական տարրը՝ սակայն չարդարացնելով այդ հարցում իր վրա Վաշինգտոնի դրած հույսերը: Հակառակ հակամարտությանը գինված միջամտությունը բացառող Ռեյգանի հավաստիացումներին, արաբ-իսրայելական հակամարտության պատմության ողջ ընթացքում առաջին անգամ ԱՄՆ-ը 1983թ. աշնանը, իր գործողություններն արդարացնելով իբրև «հարձակողական ինքնապաշտպանություն», արաբական կողմի հետ մտավ ուղղակի ռազմական առճակատման մեջ՝ կյանքի կոչելով տարածաշրջանային մակարդակով «ուղղակի հակամարտության» դոկտրինան: Իսրայելական, սիրիական և լիբանանյան զինված խմբավորումների կողմից հարձակման թիրախ դառնալով և աստիճանաբար ներհամայնքային պայքարի մեջ ներքաշվելով, Վաշինգտոնը լիբանանցիների աչքերում պասիվ խաղաղապահից վերածվեց հակամարտության ակտիվ մասնակցի: Ռեյգանն անգամ Սուքալ-Հարբը (Լեռնայի լեռնաշխարհում դրուզների դիրքերը, որտեղից հրետակոծվում էին Բեյրութում կայանած ԱՄՆ-ի ծովային հետևակայինների դիրքերը) հայտարարեց ԱՄՆ-ի ռազմավարական շահերին ուղղված սպառնալիք:

Այսպիսով, ԱՄՆ-ի աջակցությամբ լիբանանյան աչքերի դիրքերի միակողմանի ամրապնդումը, լիբանանյան հակամարտությունն ու նրանում Սիրիայի դերակատարությունն Արևելք-Արևմուտք առճակատման ոսպնյակով դիտելու հանգամանքը նպաստեց Սիրիայի և նրա լիբանանյան գործընկերների մերձեցմանը ԽՍՀՄ-ի հետ: Արդյունքում ԱՄՆ-ի աջակցությունից զրկված և լիբանանյան ձախ-մուտույմանական ուժերի դեմ միայնակ հայտնված նախագահ Ամին ժմայելը քաղաքական աջակցության նպատակով վերականգնեց Սիրիայի հետ մարտնչների հին դաշինքը՝ 1984թ. մարտին անվավեր հայտարարելով իսրայելալիբանանյան պայմանագիրը: 1983-84թթ. Բեյ-

րութում՝ ամերիկյան ու ֆրանսիական բիրախների նկատմամբ լիբանանյան շիա արմատականների ահաբեկչական գործողությունները (որից հետո Վաշինգտոնը գործի դրեց «ահաբեկչներին իրենց ապաստարաններում հարված հասցնելու մարտավարությունը») և ահաբեկչությանն իբրև փոքր ինտենսիվությամբ հակամարտության վերաբերվելու որոշում կայացրեց) նպաստեցին 1984թ. երկրից ամերիկյան ծովային հետևակայինների ու ԲՈՒ-ի հեռացմանը, իսկ 1983-85թթ. Լիբանանի հարավում իսրայելական ներկայության դեմ լիբանանյան զինված միլիցիաների պայքարը հանգեցրին 1985թ. հունվարից կենտրոնական Լիբանանից իսրայելական ուժերի դուրս բերմանը: Սիրիան ոչ միայն վերականգնեց Լիբանանում ունեցած իր նախկին ազդեցությունը, այլև երկրից 1985թ. հունվարին իսրայելական ուժերի դուրս բերումից հետո վերածվեց տիրապետող արտաքին ուժի: Այսպիսով, ՄԱ-ում ԱՄՆ-ի հեղինակությունն ու դիրքերը տուժեցին և նրա տարածաշրջանային հայեցակարգը դատապարտվեց ձախողման: 1974թ-ից արաբ-իսրայելական հակամարտության կարգավորման գործընթացը միանձնյա տնօրինող գերտերության աջակցությանն ապավինած Իսրայելը 1984թ. ընկրկեց, և այդ 10-ամյակում առաջին անգամ ԱՄՆ-ի հովանավորած արաբ-իսրայելական համաձայնագիրը ձախողվեց ԽՍՀՄ-ի դաշնակցի՝ Սիրիայի կողմից:

Հարկ է նշել, որ լիբանանյան արմատականների գործունեության ակտիվացմանը նպաստեց ՄԱ-ի հակամարտության կարգավորման գործընթացում ստեղծված փակուղային իրավիճակը՝ զգալիորեն ընդլայնելով տարածաշրջանի հակամարտությունների շրջանակը, որոնց ուժային դաշտը համարվում էր արաբ-իսրայելական հակամարտությունն ու համաշխարհային երկու հակամարտող համակարգերի առճակատումը: Արաբ-իսրայելական պատերազմներում սեփական իշխանությունների կողմից «փոքր» Իսրայելին հաղթելու անկարողությունը, ԱՄՆ-ի վարած իսրայելամետ քաղաքականությունը և վերջինիս համագործակցությունը «չափավոր» արաբական վարչախմբերի հետ, Վաշինգտոնի և նրան սատարող երկրների ու քաղաքական ուժերի նկատմամբ մուսուլմանական միջավայրում ժայռահեղ հակակրակը և անհանդուրժողականության մթնոլորտ ստեղծեցին: Պատահական չէ, որ 1986թ. փետրվարին ԱՄՆ-ի պետքարտուղար Ջորջ Շուլցը, ներկայացուցիչների պալատի օտարերկրյա գործերով զբաղվող հանձնաժողովի առջև, ԱՄՆ-ի արտաքին քաղաքական նոր հայեցակարգում չիժատակեց ազատ աշխարհի «տնտեսական և քաղաքական անվտանգության» համար Պարսից ծոցի «կենսական կարևորության» մասին (ինչպես արվել էր 1983թ. փետրվարին)՝ փոխարենը նա ընդգծեց միջազգային ահաբեկչության սպառնալիքը, որը սերտորեն կապված էր Լիբանանում իսլամականների կողմից առևանգված արևմտյան, մասնավորապես ամերիկյան պատանդների ազատագրման խնդրի հետ: 1985թ. հուլիսի սկզբին, «ահաբեկչության դեմ պայքարի» պատրվակով, ԱՄՆ-ը կրկին փորձեց իր ռազմական ներկայությունն ապահովել Լիբանանում՝ «անորոշ երկար ժամկետով» ռազմածովային ուժեր կենտրոնացնելով երկրի ծովափնյա շրջաններում: Այնուհանդերձ, պատանդների ազատագրման նպատակով Ռեյգանի վարչակազմի և Իրանի միջև իրականաց-

վամ գործարքը՝ «Իրանգեյթը», լիովին խախտելով ահաբեկչության դեմ ամերիկյան պաշտոնական հայեցակարգը (որն արտահայտում էր այլ պետությունների հետ համատեղ կամ միայնակ ահաբեկչական գործողությունների կանխարգելման և պատասխան միջոցառումների կիրառման ԱՄՆ-ի պատրաստակամությունը՝ բացառելով ահաբեկիչների հետ փոխգիշման ցանկացած հնարավորություն)՝ միաժամանակ նոր պատանդների առևանգման խթան ծառայեց: Իսկ 1985թ. վերջին Վաշինգտոնը բացահայտ սատարեց 1985թ. աշնանը լիբանանյան ճգնաժամի կարգավորման առաջատար երեք ռազմաքաղաքական խմբավորումների միջև Սիրիայի հովանու ներքո ստորագրված «Եռակողմ պայմանագրի» դեմ արտահայտվող ընդդիմությանն ու նախագահ Ժմայեյին: ԱՄՆ-ը գտնում էր, որ պայմանագրի հաջող կենսագործումը սիրիահորդաբանյան մերձեցման հողի վրա Լիբանանին ևս կարող էր մղել այդ երկրների հետ «արևելյան ճակատում» ընդգրկվելու գաղափարին՝ նսեմացնելով ՄԱ-ում ԱՄՆ-ի դերը: Չի բացառվում, որ պայմանագրի դեմ գործելով՝ վերջինս ձգտում էր պատժել իր հովանու ներքո ստորագրված լիբանանահարայելական 1983թ. պայմանագրի ձախողմանը նպաստող Սիրիային:

1986թ. աշնանից ԱՄՆ-ը և նրա արևմտյան գործընկերները սկսեցին ակտիվ միջոցներ ձեռնարկել Դամասկոսի հետ «սառեցված» հարաբերությունների «ջերմացման» ուղղությամբ՝ բացահայտ շահագրգռվածություն հանդես բերելով Սիրիայի հետ քաղաքական երկխոսության վերականգնման հարցում: Նոր իրողության պայմաններում, ԱՄՆ-ը ձգտում էր մեղմացնել Լիբանանում Դամասկոսի հակաամերիկյան և հակահարայելական քաղաքականությունը, ծայրահեղ դեպքում չեզոքացնել նրա դերն այդ երկրում լիբանանյան նախագահական վերահաս ընտրությունների նախաշեմին: Վաշինգտոնն այժմ փորձում էր ԱՄՆ-ի դիվանագիտության համար հաջողություն սպասելու փորձերը տեղական կուսակցությունների հետ գործակցության միջոցով՝ գերադասելով խոսել ոչ թե ինչ-որ նախաձեռնության կամ ծրագրերի, այլ այդ երկրի հիմնախնդիրների համալիր կարգավորման մասին՝ մի կողմից Սիրիայի ու նրա լիբանանյան դաշնակիցների, մյուս կողմից՝ Լիբանանի նախագահ Ամին Ժմայեյի ու աջ-քրիստոնեական ուժերի միջև «կամուրջների անցկացման», քաղաքական բարեփոխումների հարցում քրիստոնյաների համաձայնության ձեռք բերման, քաղաքական որոշումների ընդունման գործընթացին մուտավանական համայնքի մասնակցության ապահովման, ինչպես նաև Լիբանանում Դամասկոսի հատուկ դերի ճանաչման միջոցով: Թեև Վաշինգտոնի և Դամասկոսի միջև պայմանավորվածություններն առաջին հայացքից չէին շոշափում Լիբանանի հիմնախնդիրներն ու ճգնաժամի առաջացման պատճառները, այնուհանդերձ, վերահաս նախագահական ընտրությունների նախաշեմին զգալիորեն ակտիվացնում էին ինչպես երկրի ներքաղաքական զարգացումները, այնպես էլ լիբանանյան ճգնաժամի, մասնավորապես նախագահական ընտրությունների նախապատրաստության ու անցկացման շուրջ միջազգային՝ մասնավորապես Սիրիայի և ԱՄՆ-ի ներգրավվումը: 1988թ. սեպտեմբերի Լիբանանի նախագահական ընտրությունների ձախող-

ման հետ կապված քաղաքական փակուղու առաջացման հարցում իր դերն ունեցավ նաև ամերիկյան դիվանագիտությունը, որի միջամտության արդյունքում Սիրիան հրաժարվեց իր թեկնածուի՝ Լիբանանի նախկին նախագահ Ս.Յրանժիեի առաջադրումից, իսկ Դամասկոսի երկրորդ թեկնածուի լուռ սատարումը Վաշինգտոնի կողմից լիբանանյան կառավարության հետագա պաշակաման պատճառ դարձավ: Խորհրդարանական վակուումը գեներալ Աունի վարչապետության միջոցով լրացման հետևանքով երկրում ստեղծվում է լեգիտիմ իշխանության ձեռք բերման ուղղությամբ մրցակցող երկու հակամարտող կառավարությունների համագոյակցություն:

ԱՄՆ-ի նախագահ Ջորջ Բուշի վարչակազմը (1989-1993թթ.), որը մինչ այդ խուսափում էր ՄԱ-ի նկատմամբ համապարփակ քաղաքականության ձևավորումից, այժմ՝ ելնելով լոկալ հակամարտությունների (կոնկրետ դեպքում լիբանանյան) ծավալման մտավախությունից, փորձեց կասեցնել Սիրիայի ջանքերը՝ հրաձգությունների և ցամաքային գրոհների միջոցով Լիբանանի քրիստոնեական ինքնավար շրջանի ոչնչացման ուղղությամբ: Միաժամանակ հաշվի առնելով Լիբանանում Դամասկոսի կարևոր դերակատարությունը, ԱՄՆ-ը փորձում էր լիբանանյան և արաբ-խրայելական հիմնախնդիրների կարգավորման հետո գնացող նկատառումներով առավել ընդլայնել Սիրիայի հետ համագործակցությունը: Այդ նպատակով Լիբանանի և ՄԱ-ի խաղաղության հիմնախնդիրներն ԱՄՆ-ի հովանու ներքո քննարկման դրվեցին 1989թ. մայիսին Կասաբլանկայում գումարված արաբական երկրների գագաթնաժողովում, որում քննարկման ներկայացված «Թաիֆի համաձայնագրով» օրինականացվեց Լիբանանում Սիրիայի դերը՝ յուրօրինակ «Pax-Syriana» հաստատելու հնարավորություն ընձեռելով Դամասկոսին: ԱՄՆ-ը հավանություն էր տալիս Լիբանանում Սիրիայի տիրապետող դիրքերի պահպանմանը՝ այդ ուղղությամբ խոստանալով ապահովել իր աջակցությունը:

Իսկ Ճովածցի պատերազմում տարած հաղթանակի շնորհիվ ԱՄՆ-ի և Սաուդյան Արաբիայի «օրհնությամբ» Թաիֆի համաձայնագիրը կատարելապես «սիրիականացվեց»՝ օրինականացնելով Լիբանանում Սիրիայի առանցքային դերը: Հարկ է նշել, որ «սառը պատերազմի» ավարտն ու ԽՍՀՄ-ի փլուզումը, առավել ամրապնդելով ԱՄՆ-ի տարածաշրջանային դիրքերը, վերջինիս հնարավորություն ընձեռեցին անարգել հետամուտ լինել իր քաղաքական նպատակների իրագործմանը: Վաշինգտոնն այժմ ազատ էր Թաիֆի գործընթացների նկատմամբ արաբական աջակցության ապահովման հարցում, որի իրագործմանը մտադիր էր հասնել Սիրիայի միջոցով:

Եզրափակված մեջ, ատենախոսության հիմնահարցերի ուսումնասիրության և նրանց վերլուծության արդյունքում ատենախոսը հանգել է հետևյալ եզրակացություններին.

1. Լիբանանի հասարակության երկփեղկման ու ներքաղաքական ճգնաժամի սրման գործընթացները պայմանավորված էին ինչպես ներքին սոցիալ-տնտեսական, քաղաքական, ազգային-կրոնական և միջարաբական հակասություններով, այնպես էլ արտաքին ուժերի՝ մասնավորապես ԱՄՆ-ի և

տարածաշրջանի երկրների՝ առաջին հերթին Սիրիայի (ավելի ուշ՝ նաև Իսրայելի) վարած քաղաքականությանը:

2. Սառը պատերազմի ուսումնասիրվող ժամանակահատվածում համաշխարհային երկու բևեռների՝ Արևմուտքի և Արևելքի միջև պայքարը, ինչպես նաև ԱՄՆ-ի կողմից մերձավորարևելյան հակամարտության կարգավորման գործընթացի միակողմանի տնօրինումը նպաստեցին Լիբանանի քաղաքական ճգնաժամի խորացմանը: Երկիրը վերածվեց գերտերությունների մերձավորարևելյան հովանավորչակների մասնակցությամբ ուղղակի կամ անուղղակի կերպով ներպետական և միջպետական հակամարտությունների և ներհամայնքային պայքարի մարտադաշտի:

3. ՄԱ-ում ԱՄՆ-ի վարած իսրայելամետ քաղաքականության արդյունքում Վաշինգտոնի ռազմաքաղաքական աջակցությունից օգտվող Թեյ-Ավիվը Լիբանանի նկատմամբ իրարահաջորդ (1978 և 1982թթ.) ագրեսիաներ իրականացրեց: ԱՄՆ-ը հովանավորեց Լիբանանից ՊԱԿ-ի ռազմաքաղաքական կառույցների դուրս բերման և երկրում արևմտամետ ու իսրայելամետ կառավարության հաստատման գործընթացները:

4. 1982թ. երկրորդ կեսից Լիբանանի ներքաղաքական կարգավորման գործընթացում ԱՄՆ-ի զբաղեցրած միակողմանի դիրքորոշման արդյունքում ԽՍՀՄ-ի տարածաշրջանային դաշնակից Սիրիան (լիբանանյան դաշնակիցների հետ միասին) արաբ-իսրայելական հակամարտության 10-ամյա՝ 1973-1983թթ., պատմության մեջ առաջին անգամ ձախողեց ԱՄՆ-ի հովանավորած իսրայելալիբանանյան 1983թ. համաձայնագրի իրագործումը և ԱՄՆ-ը ռազմաքաղաքական պարտություն կրեց Լիբանանում:

5. Անգոր գտնվելով նաև Լիբանանի արմատական շարժումների ու ահաբեկչության դեմ պայքարի հարցում, Վաշինգտոնը դիմեց այդ ուղղությանը երկակի ստանդարտների քաղաքականության (Իրանցեյթ գործարք): Վաշինգտոնը դավաճանեց ահաբեկչության դեմ անգիջում պայքարում *իր իսկ կողմից որդեգրած և ողջ աշխարհին պարտադրած սկզբունքներին* արևմտյան պատանդներին ազատագրելու նպատակով գաղտնի գործարքի մեջ մտնելով ԱՄՆ-ի մերձավորարևելյան հակառակորդ Թեհրանի հետ: Միևնույն նպատակով Վաշինգտոնը չիրաժարվեց *իր իսկ կողմից ահաբեկչությանը հովանավորող պետությունների ցուցակում ընդգրկած Սիրիայի ժառանգություններին*:

6. 1986թ. ԱՄՆ-ը և նրա արևմտյան գործընկերները սկսեցին ակտիվ միջոցներ ձեռնարկել Դամասկոսի հետ «սառեցված» հարաբերությունների «օջրմացման» ուղղությամբ՝ բացահայտ շահագրգռվածություն հանդես բերելով Սիրիայի հետ քաղաքական երկխոսության վերականգնման հարցում: Նոր իրողության պայմաններում, ԱՄՆ-ը ձգտում էր մեղմացնել Լիբանանում Դամասկոսի հակամարտության և հակաիսրայելական քաղաքականությունը, ծայրահեղ դեպքում՝ չեզոքացնել նրա դերն այդ երկրում լիբանանյան նախագահական վերահաս ընտրությունների նախաշեմին:

7. Ամերիկյան դիվանագիտությունն իր բացասական դերակատարությունն ունեցավ 1988թ. սեպտեմբերին Լիբանանի նախագահական ընտրու-

յունների ձախողման հետևանքով առաջացած քաղաքական փակուղու հարցում, որի միջամտության արդյունքում Սիրիան հրաժարվեց իր թեկնածուի առաջադրումից, իսկ Դամասկոսի երկրորդ թեկնածուի լուր սատարումը Վաշինգտոնի կողմից լիբանանյան կառավարության հետագա պատակտման պատճառ դարձավ:

8. Հաշվի առնելով Լիբանանում Դամասկոսի առանցքային դերակատարությունը, ԱՄՆ-ը փորձում է լիբանանյան և արաբ-իսրայելական հիմնախնդիրների կարգավորման հետո գնացող նկատառումներով առավել ընդլայնել Սիրիայի հետ համագործակցությունը: Այդ նպատակով Լիբանանի և ՄԱ-ի խաղաղության հիմնախնդիրներն ԱՄՆ-ի հովանու ներքո քննարկման դրվեցին 1989թ. մայիսի Կասաբլանկայում գումարված արաբական երկրների գագաթնաժողովում, որում ստորագրված «Թաիֆի համաձայնագրով» օրինականացվեց Լիբանանում Սիրիայի դերը՝ յուրօրինակ «Pax-Syriana» հաստատելու հնարավորություն ընձեռնելով Դամասկոսին: ԱՄՆ-ը հավանություն տվեց Լիբանանում Սիրիայի տիրապետող դիրքերի պահպանմանը՝ այդ ուղղությամբ խոստանալով ապահովել անգամ իր աջակցությունը:

9. Լիբանանի և Սիրիայի միջև «հատուկ» հարաբերություններն ամրապնդվեցին երկու երկրների կառավարությունների միջև 1991թ. մայիսի 22-ին Դամասկոսում Եղբայրության, համագործակցության և համակարգման դաշնագրի ստորագրումով, որը դեռևս 1980-ականների երկրորդ կեսից սկիզբ առած գործընթացների տրամաբանական շարունակությունն էր: Գործընթացներ, որոնք սկիզբ դրեցին ամերիկյան համաձայնությամբ Լիբանանում Սիրիայի զբաղեցրած դերի օրինականացմանը:

Այսպիսով, մնում է ենթադրել, որ լինելով հակամարտությունների հարատև *օբյեկտ*, Լիբանանը պարտավոր է ճկունություն ու հնարամտություն հանդես բերել իր հիմնախնդիրների կարգավորման ուղղությամբ ակտիվ *սուբյեկտի* վերափոխվելու ուղղությամբ: Լիբանանը պետք է ձգտի գործնականում հասնել ազգային հաշտության, որը հիմնված կլինի միջ- և ներհամայնքային փոխհանդուրժողականության ու հարգանքի, ժողովրդավարության, մարդու իրավունքների հարգանքի և քաղաքական պլյուրալիզմի՝ այլուրեքության վրա: Այդ ժամ խաղաղության համաժողովներում Լիբանանը կլինի ոչ թե «սեղանի վրա», այլ «սեղանի մոտ» բանակցելիս: Այս ամենին իր հերթին կարող է նպաստել արաբական աշխարհի կողմից իր հսկայական ներուժի գիտակցումը, որն ի վիճակի է համագործակցել կամավորության սկզբունքներով ժողովրդավարություն վարող երկրների ընդհանուր համաձայնության հիման վրա: Այս հանգամանքների անտեսման արդյունքում համաշխարհային հանրության մոտ ՄԱ-ը կշարունակվի ասոցացվել անվերջ ու անլուծելի թվացող հակամարտությունների օջախի հետ, իսկ իսլամը կնույնացվի ահաբեկչության հետ՝ շարունակելով մնալ իբրև ԱՄՆ-ի հռչակած «ահաբեկչության դեմ գլոբալ պատերազմի» թիրախ:

1. Հարությունյան Ա., Սիրիա-լիբանանյան Թայեֆի համաձայնագիրը, «Հանդես Երևանի համալսարանի» գիտահնթորմացիոն լրատու, N 1(96), Երևան 2000 թ., էջ 111-117:
2. Հարությունյան Ա., Լիբանանյան «Հիզբալլահի» որպես տարածաշրջանային ռազմաքաղաքական գործոն, Մերձավոր Արևելքի երկրներ և ժողովուրդներ, 23-րդ հատոր, Երևան, 2004 թ., էջ 124-132:
3. Հարությունյան Ա., ԱՄՆ մերձավորարևելյան քաղաքականությունը 1980-1981թթ., Մերձավոր Արևելքի երկրներ և ժողովուրդներ, 24-րդ հատոր, Երևան, 2005թ., էջ 111-124:
4. Հարությունյան Ա., ԱՄՆ-ի լիբանանյան քաղաքականության որոշ ասպեկտների շուրջ (1982-1984թթ.), Մերձավոր Արևելքի երկրներ և ժողովուրդներ, 25-րդ հատոր, Երևան, 2006թ., էջ 67-82:
5. Հարությունյան Ա., ԱՄՆ-ի դիրքորոշումը 1975թ. լիբանանյան քաղաքացիական պատերազմի նկատմամբ նրա սկզբնական փուլում, Մերձավոր Արևելք, Պատմություն, Զաղաքականություն, Սշակույթ, Հոդվածների ժողովածու, ՀՀ ԳԱԱ ԱԻ, Երևան, 2007, էջ 66-72:

АРУТЮНЯН АГАВНИ АЛЕКСАНДРОВНА
ПОЛИТИКА США В ЛИВАНЕ В ГОДЫ ВТОРОЙ ГРАЖДАНСКОЙ ВОЙНЫ
И КРИЗИСА (1975-1991гг.)

Диссертация на соискание ученой степени кандидата исторических - наук по специальности 07.00.02. - "Всемирная история"
Защита состоится 21-го декабря 2007г. в 14⁰⁰ часов на заседании специализированного Совета 006 ВАК действующего в институте Востоковедения НАН РА
(375019, г. Ереван, проспект Маршала Баграмяна 24г)

РЕЗЮМЕ

Представленная работа посвящена изучению ключевых вопросов ливанской политики США, которые непосредственно связаны с ближневосточной политикой Белого дома в период 1975-1991гг. Изучение данной проблемы актуально и важно с научной, политической и практической точек зрения.

Исследование ливанской политики США в указанный период будет способствовать правильному пониманию важных аспектов межарабских отношений, а также вопросов, связанных с политическими процессами, протекающими в ближневосточном регионе.

Тема диссертации является предметом отдельного исследования, хотя некоторые ее аспекты частично освещались как армянскими, так и советскими, российскими и другими зарубежными востоковедами, в основном, в свете арабо-израильского противостояния и общих проблем, касающихся политических и экономических процессов ближневосточного региона. По своему содержанию и рассматриваемым вопросам эта работа является первым исследованием в армянском востоковедении.

Диссертация состоит из вступления, четырех глав (каждая из которых содержит подзаголовок), заключения, таблицы, карты, списка использованных источников и литературы, списка использованных аббревиатур, восьми приложений.

В Введении обосновывается актуальность темы, ее научное и политическое значение, определены научная новизна, главные цели и задачи, практическое значение данного исследования. Дается обзор источников, официальных документов и материалов, а также использованная в работе литература.

В первой главе - "Гражданская война Ливана 1975г. и позиция США в ее начальном этапе", обсуждаются общий характер ближневосточной политики США, конфессиональный состав и политическая структура Ливанской Республики, возникновение социально-экономического и политического кризиса в Ливане и роль палестинского фактора в его углублении, разжигание гражданской войны и формирование противоборствующих альянсов внутри страны.

Рассматривается роль Ливана в ближневосточной повестке дня США, позиция Америки по отношению проектов о разъединении Ливана и по отношению вмешательства Сирии во внутриливанские дела.

Во второй главе - ("Позиция США по отношению ливанской интервенции Сирии 1976г. и ливанской интервенции Израиля 1978г.") - обсуждается позиция Америки по отношению военной интервенции Сирии в Ливан (1976г.), саммиты ЛАГ (Лига арабских государств), посвященные Ливану, отношение США по созданию федеративного альянса между Сирией, Иорданией и Ливаном, а также ближневосточная и в этом контексте ливанская политика администрации Картера, позиция США по отношению израильской интервенции в Южный Ливан в 1978г., объявление Ближнего Востока в качестве "жизненно важного" региона для США (1979г.), посредническая миссия США по распространению центральной власти в Южном Ливане и последствия кемп-девидской сепаратной сделки на ливанские события.

В третьей главе ("Ливанская агрессия Израиля 1982г. и развития ливанских событий-серьезный вызов против США"), камнем преткновения - научного обсуждения является ближневосточная и ливанская политика первой администрации Рональда Рейгана и разногласия внутри американской администрации вокруг намеченной политики Вашингтона, позиция США по отношению ливанской интервенции Израиля в 1982г. и миротворческая посредническая миссия США по урегулированию обстановки Ливана, эвакуация ООН из Ливана (1982г.) под надзором "Многонациональных Сил" ООН и морских пехотинцев США, программа Рейгана по ближневосточному урегулированию (1982г. сентябрь), военно-политическая и экономическая помощь США назначенное для укрепления власти президента Ливана (Амин Жмаил).

В четвертой главе ("США: от покровителя израило-ливанского договора 1983 года до покровителя сирийско-ливанского договора 1989 года"), рассматриваются американо-израильский "стратегический договор" и израило-ливанский договор 1983г., военное вмешательство США в ливанский конфликт и внутриадминистративные разногласия в США по этому поводу, эвакуация морских пехотинцев США (1984г.) и израильских сил (1985г.) из Ливана в результате борьбы альянса левых сил Ливана и Сирией против вмешательства США во внутриливанские дела, превращение Ливана в очаг террористической деятельности и сделка "Ирангейт" (1985-1986г.), позиция США по отношению дамаскского "Трехстороннего соглашения" 1985г., обострение внутриливанской борьбы, сирию-американское сотрудничество для урегулирования ливанского кризиса и президентских выборов Ливана (1988г.), заключение сирийско-ливанского договора Таифа (1989г.) под покровительством США.

В заключении на основании проведенного исследования диссертации сделаны выводы по основным рассмотренным вопросам, показано их значение для современной исторической науки.

Работа может представлять интерес для изучения ближневосточной политики США и политических процессов ближневосточного региона, а также может быть использована для составления лекционных курсов по разным аспектам истории Ливана (1975-1991гг.). Положения и выводы диссертации могут быть полезны для подготовки аналитических материалов для государственных органов Республики Армения, а также для разработки некоторых внешнеполитических вопросов, связанных с Ливаном.

AGHAVNI HARUTYUNYAN
USA POLICY DURING THE SECOND CIVIL WAR AND CRISES OF
LEBANON
(1975-1991)

